Ը. ՏԱՐԻ 2376 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 16 ՔՂՂՈՑ 4384 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1891 4 ՃԷՄԱԶԻԻԼ ԱԽԸՐ 1309 ԵՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՁ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده آره‌وه
غزته‌سی اداره‌سنه

Direction du Journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ Պոլսոյ համար Տարեկան դրամական արժեքով	150
» » Վեցամսեայ » »	75
» » Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ Տարեկան Ֆրանք	50
» » Վեցամսեայ »	28
Ինքզինքը Թուրքիի վրայ մասնաւոր ազգագր. Տարեկան Օսմ. Ոսկի	2
Դուսաց Թղթատարի ծախք միօրինակ	Ղրշ. 50

Խմբագրութեան ուղղուած Նամակ կամ լայլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ԴԵԿՏ. 24|5 ՅՈՒՆՎ. 1891

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կղերական խնդիրը կը շարունակէ լրագրերն զբաղեցնել։ Հիմա կղերական կուսակցութեան մէջ իսկ անհամաձայնութիւն մտած է։ Պ. Փոլ տը Քասանեաք պոնապարդեան մ'է, որ միշտ կաթոլիկ կուսակցութեան վերայ կրթնած է՝ Հանրապետութեան դէմ խօսելով և գործելով, և Միապետութեան վերահաստատման փափաքելով։ Եւ այս եռանդուն գործիչ դիգէն է Վատիկանեան մեղմ քաղաքականութենէն, որով Ֆրանսացի եպիսկոպոսաց խոհեմութիւն կը քարոզուի, և յորմէ ներշնչեալ պապական նուիրակն ի Փարիզ՝ հանրապետական կառավարութեան հետ հաշտ վարուելու բանիւ և արդեամբ օրինակ կուտայ ֆրանսացի եպիսկոպոսաց։ Ուստի Պ. Քասանեաք իր Օրտէրէ լրագրին մէջ նուիրակին դէմ գրեց, և Վատիկանի ընթացքին դէմ, յայտարարեց բացարձակ թէ «Հաւատոյ մասին Լեւոն ԺԳ. իրաւունք ունի հեղինակութեամբ խօսելու և մեր ամենէս հնազանդութիւն պահանջելու։ Իսկ քաղաքական գործոց մէջ, կաթոլիկներն իրենց խղճին համեմատ կը վարուին, իւրաքանչիւր ոք իւր երկրին պահանջմանց եւ պիտոյից համաձայն։» Նուիրակին բերան եղած ուրիշ թերթ մը պատասխանեց առ Օրտէրէ թէ Պապն ամեն քաղաքական կուսակցութիւններէ վեր դիրք մը բռնելով, ամենէն աւելի ի վիճակի է դիտալ թէ Եկեղեցւոյն շահուց ո՛ր քաղաքականութիւնը ձեռնտու է առաւելապէս։ Եթէ Պապը խոհեմ և հաշտարար ընթացք մը կը յանձնարարէ Ֆրանսացի եպիսկոպոսաց, պատճառն այն է որ Եկեղեցւոյ շահուց այսպիսի ընթացք մը աւելի նպաստաւոր կը համարի, եւ ամեն բարի կաթոլիկ պէտք է խոնարհի Եկեղեցւոյ Պետին այս տնօրէնութեան առջեւ։ Գալով նուիրակին, քանի որ հանրապետական կառավարութեան մօտ պաշտօնի կոչուած է, հարկաւ իրեն բան դործ չի կրնար ընել այն կառավարութեան հակառակ ընթացքի մը մղել Ֆրանսացի եպիսկոպոսներն։ Իւր դեսպանական պաշտօն էապէս հաշտարար պաշտօն մ'է, Վատիկանի եւ Ֆրանսայի յարաբերութիւնները բարեկամական վիճակի մէջ պահելու սահմանեալ։

Ի վերայ այսր ամենայնի, Փարիզեան քանի մը թերթեր մանրամասնութեամբ կը պատմեն Ֆրանսացի կարդ մը եպիսկոպոսաց դժգոհութիւնն այս հաշտարար քաղաքականութեան դէմ։ Փարիզի կարդինալ-արքեպիսկոպոսն ինքն իսկ դրուխ կանդներէ է Ֆրանսական եպիսկոպոսութեան այս գործունեայ մասին, ընդդէմ նուիրակին, որ Էքսի արքեպիսկոպոս Կուլթ-Սուլառ եպիսկոպոսի առաքը պախարակած էր, և Փարիզի արքեպիսկոպոսին երեսը զարկած էր այնպիսի հակակառավարական եկեղեցականի մը Փարիզի արքեպիսկոպոսարանին մէջ հիւրընկալուելուն ու քաջալերուելուն։ Արքեպիսկոպոսը քանի մը եպիսկոպոսներու մտերմական գուժարման մէջ խիստ խօսքեր ըսեր է նուիրակին նկատմամբ։ Ներկայ եպիսկոպոսաց մին դանդատեր է թէ նուիրակի պաշտօնատունը սխալ լուրերու կեդրոն մ'եղած է։ Ներկայ եպիսկոպոսք Փարիզի արքեպիսկոպոսին յանձներ են յիշատակագիր մը պատրաստել Ֆրանսայի կրօնային կամ եկեղեցական վիճակին վրայ եւ Լեւոն ԺԳ. Պապին զրկել։ Անձէն Ֆրէբել եպիսկոպոսն ալ իւր մահէն ութ օր յառաջ Պապին զրկեր է քննադատական նամակ մը նուիրակին բռնած ընթացքին դէմ։ Սէէզի եպիսկոպոսն եւս այնպիսի գիր մը զրկեր է Պապին։ Ի մի բան, Ֆրանսական եպիսկոպոսական դասն երկու հակառակ հատուածներու բաժնուած է։ Մէկ մասը տրամադիր է ճանչել երկրին հանրապետական վարչութեան ձեւը, միւս մասը կը հետամտի միապետական դրութեան, ուստի և կը շարունակէ մաքառիլ արդի դրութեան դէմ, կաթոլիկ եկեղեցւոյ շահերուն անհամաձայն գաւանելով զայն, հակառակ նոյն իսկ Վատիկանի յայտարարութեան թէ կառավարական դրութիւնք եւ ձեւակերպութիւնք տարբերութիւն չեն ըներ եկեղեցւոյ նկատմամբ, որ յաւիտենական է, և կրնայ հանդիսատես լինել յաւիտենականութեան ձեւաշատութեանց։ Ֆրանսացի եպիսկոպոսաց մէջէն այս վերջին կարգի պատկանողք աւելի շատոր են քան առաջինք, կառավարականք։ Բայց Հանրապետականք երկիւղ չեն կրեր։ Գիտեն թէ երկրին ստուար մեծամասնութիւնն յարեալ է տիրող դրութեան։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Անցեալ շաբթուն մեծ հանդէս մը տեղի ունեցաւ ի Սանդիակօ, Բիլիի մայրաքաղաքին մէջ, ուստիր դեռ մի քանի շաբթներ յառաջ քաղաքային պատերազմի աղեսալի լուրեր կուդային։ Պալմաչէտա դիկտատորն որ Խորհրդարանը լուծած էր, խորհրդարանական կուսակցութեան նաւատորմին ու բանակին կողմէ չարաչար յաղթուելէն ետեւ ինքնասպան եղաւ, յաղթական կուսակցութիւնը չուտով վերահաստատեց բարեկարգութիւնն ու խաղաղութիւնն, և ամենայն օրինաւորութեամբ նոր նախագահի մ'ընտրութիւնը կատարեց, որ ոչ-կուսակցական մարդ մ'եղաւ, նաւային բարձրաստիճան սպայ Պ. Մօնթ, որոյ անցեալ շաբթուն պաշտօնական հաստատման հանդէսը դիտելու համար, աւելի քան վեցսուն հազար անձինք խռնած էին փողոցներու մէջ, թափորին անցած տեղերն։ Ժողովուրդը ջերմ հաճակրանք ցուցուց նոր Նախագահին, որոյ իշխանութեան ներքև կը յուսացուի որ Բիլի վերագտնէ իւր պահ մ'ընդհատեալ անդորրութիւնն և զարգացումն։ Բիլի միշտ պատուաբեր դիրք մը գրաւած էր, միշտ օրինաւորութեամբ լուծելով իւր ներքին կնճիռներ։ Պալմաչէտա նախագահին օրով ծագած յուզումը վաղանցիկ բան մ'եր, և հիմա ո՛չ մէկ ներքին անհամաձայնութիւն կ'երկպառակէ Բիլիցիներն։ Արտաքին դժուարութիւն մը միայն կը զբաղեցունէ միտքերը, Միացեալ Նահանգաց հետ ծագած վէճն, որ դեռ չէ վերջացած։ Ամերիկեան դեսպանն՝ իռլանդացի նախկին ծայրայեղ գործիչ Պ. Էկան՝ քաղաքային պատերազմի միջոցին Պալմաչէտայի կողմը բռնելով, հակառակ կուսակցութեան ատելութիւնն հրաւիրած էր իւր վրայ, որ երբ երկրին իշխանութիւնն իւր ձեռքն անցուց, չուզեց գործ ունենալ Պ. Էկանի հետ։ Բայց Միաց. Նահանգաց կառավարութիւնն իւր դեսպանն եւս չկանչեց։

Բիլիի հետ վէճին պատճառաւ, Պ. Էկան, ամերիկեան դեսպանը, ներկայ չգտնուեցաւ նորընտիր Նախագահին հաստատման հանդիսին, ուր ներկայ էին ամեն դեսպանք։

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ռուս լրագրերք, ի գլուխ որոց Նովոյէ Վրեմա, կառավարութեան ուշադրութեան մատուցին սովելոյց համար արմտիք տուող մի քանի վաճառականներու մէկ մեծ խաբեութիւնն, և կառավարութիւնը քննութիւն կատարելով, արդարացի դատաւ այս ամբաստանութիւնը։

Փեթերսպուրգի քաղաքային խորհուրդը Լիպաւի քանի մը վաճառականներէ գաբրի մեծաքանակ ալիւր գնած էր՝ Փեթերսպուրգի հրապարակին համար, որպէս զի կանոնաւորուի ցորենի գինն այն հրապարակին վրայ։ Երբ ալիւրն եկաւ, դիտուեցաւ որ բոլոր բեռն, 300 հազար փութ, վնասակարութիւնով խառնուած է, մեծ մասամբ փոչով, այնպէս որ այն դարիով չինուած հաց հասարակութեան վնասելու միայն կրնար ծառայել։ Նովոյէ Վրեմա իւր տպարանին մէջ ի ցոյց դրած է այս անանուն խառնուրդին նմոյշներն, որպէս զի թերահաւատներն աչքով տեսնեն հաւատան։

—Ամերիկեան կառավարութիւնը Ֆոնտրեվէզ պետական նաւն յատկացուց՝ ամերիկացի ջաղացպաններու եւ բարեսէր անհատներու կողմէ Ռուսիոյ սովելոյց նուիրուելիք ալիւրը Ռուսիա փոխադրելու համար։

ԾԵՐԱԿՈՑՏ ԵՒ ԵՐԵՍՓՈԽԱՆՈՒԹԻՒՆ Ի ՖՐԱՆՍԱ

Ֆրանսացի Արմատականք կը փափաքին Ծերակոյտին չնչման, որպէս զի բովանդակ օրէնսդիր իշխանութիւնը կեդրոնանայ Երեսփ. Ժողովոյ մէջ, յորում տիրող կուսակցութիւնն երկրին տիրող կուսակցութիւնը լինի արդեամբ, մինչ այժմ Երեսփ. Ժողովոյ կարգ մը անխորհուրդ գործերը կը սրբագրէ Ծերակոյտն։ Հանրապետականք, ընդհակառակն, երեսփոխանութեան ծայրայեղութեանց դէմ պատուար մ'ուզենալու համար, Ծերակոյտը կը պաշտպանեն, և կը պնդեն թէ Ծերակոյտը նոյն իսկ Հանրապետութեան տեւականութեան համար կարեւոր է. զի կրնայ պատահիլ որ ընդհանուր ընտրութեան մը մէջ Ժողովրդեան մէկ մեծ մասն հանրապետական վարչութեան դէմ իւր դժգոհութիւնն յայտնելու համար միապետական ընտրելիներու քուէ տայ։ Բայց քանի որ Ծերակոյտը կայ, Հանրապետութիւնն անոր կընայ յենուլ և կառավարել երկիրը, մինչև որ ընդհանուր քուէարկութիւնն իւր վայրկենական չեղումն ուղղէ։ Ծերակոյտին մասնակի փոփոխմամբ ընդունուած նոր տարերք կրնան Ծերակոյտի եւս ուղղութիւնը փոխել. բայց մինչեւ այն ատեն Հանրապետութիւնը կանգուն կը մնայ։ Ընդհակառակն, եթէ երեսփոխանութիւնը մեծամասնութեամբ ծայրայեղ տարրերէ կազմուի, որք այլանդակ փոյձեր ուզեն ընել, Ծերակոյտի չափաւոր մեծամասնութիւնն անդին պատրաստ կեցած է միշտ զանոնք չեղեալ հռչակելու համար։

Ամեն տարի Ծերակոյտը կը գանգատէր թէ երեսփոխանութիւնը տարւոյն վերջը կարճ միջոց մը կը թողու նոր ելմտացոյցի քննութեան համար։ Երեսփ. Ժողովը ելմտացոյցը քննելէն ետեւ՝ կը զրկէ Ծերակոյտին, որ եթէ դիտողութիւններ ընէ, երեսփոխանութիւնը կը լսէ այն դիտողութիւններ, և մէկ կողմին կամ միւսին զիջողութիւնքը կամ իրաւախոհութեամբ, ելմտացոյցն երկուստեք հաստատուելէն ետքը կը գործադրի։ Այս տարի սովորականէն ալ կարճ միջոց տրուած լինելով Ծերակոյտին կողմէ ելմտացոյցին քննութեան, Ծերակոյտն յայտարարեց թէ մինչեւ Ամանոր չի կրնար ելմտացոյցի գործը վերջացնել, և թէ հարկ է որ կառավարութիւնն առժամանակեայ վարկեր խնդրելով կառավարէ երկիրն։ Արմատականք տրտնջեցան, տեսնելով որ Ծերակոյտն իւր գործը լրջութեամբ կատարել կ'ուզէ. բայց Ծերակոյտն հաստատ կեցաւ, զի այժմ իւր մէջ կը պարունակէ նախկին վարչապետ Պ. Ժիւլ Ֆէռի, որ էապէս կառավարական մարդ մ'է, իշխանութեան և տեւականութեան կուսակից, որ կը պնդէ թէ Ծերակոյտն իւր ոյժը զգալի ընելու է Արմատականներուն։ Բոլոր նորընտիր ծերակուտականք Պ. Ժիւլ Ֆէռիի պէս կը խորհին, և չափաւոր հանրապետականք կը հաւատան թէ երկրին մեծամասնութիւնն և Ծերակոյտն իրական ոյժ մը տեսնելու փափաքող է, և ոչ թէ անուանական բան մը. ինչպէս կ'ուզեն Արմատականք։ Շատ մը տարիներէ հետէ առաջին անգամ լինելով, Ֆրանսա տարեկան նոր չրջան մը սկսաւ առանց քուէարկուեալ ելմտացոյցի մը, և երկիրը կը կառավարուի ամսական առժամանակեայ վարկով (երկուտասանեակնեւրով), մինչեւ որ Ծերակոյտը ելմտացոյցը քուէարկէ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄ

Ֆրանսայի ծովային նախարարութիւնը Թուլոնի նաւարանին հրամայեց փութալ արագահարուած թնդանօթներով սպառազինել ֆրանսական 12 մարտանաւեր, որք մայիս ամսուն պէտք է կատարելապէս զինուած լինին 25 հատ 10 սանդիմէտրնոց թնդանօթներով, 15 հատ 14 սանդիմէտրնոց եւ չորս հատ 16 սանդիմէտրնոց թնդանօթներով։

ՌՈՒՍԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄ

Հակառակ սովու, ռուս կառավարութիւնն որոշեց նոր տարւոյն մէջ կարեւոր յաւելումներ ընել նաւատորմին զօրութեան վրայ։ Առաջիկայ տարւոյն մէջ երեք նոր զրահաւորք պիտի շինուին։ Այս որոշման հետեւութիւնն այն եղաւ որ ծովային նախարարութիւնն յայտարարեց թէ կարելի չէ ո եւ է խնայութիւն ընել նաւային ելմտացոյցէն, ո՛չ այս տարի, ո՛չ գալ տարի։

ՄՐՑԱԿԻՑ ՄԸ Պ. ՍԹԷՆԼԻԻ

Պ. Սթէնլիի դափիներն անքուն թողեր էին զՊ. Պրազա, կառավարիչն ֆրանսական Բոնկոլի, որ ֆրանսացի երկրախոյզ Պ. Ֆլանբէլի ջարդէն ի վեր, միտքը դրած է Զատ լիճն հասնիլ և այն կողմերը ֆրանսական գերիշխանութեան ներքեւ առնուլ։ Զատ, Ամբրիկէի մեծագոյն լիճն, անհրաժեշտ կը համարուի Ամբրիկէի ներսերը ֆրանսական գաղթականութեան զարգացման համար։ Բայց մինչեւ ցարդ երկրախոյզք, զօրագնդոց այն յառաջապահք, չեն կրցած հասնիլ Զատ լիճը, բնիկներուն հակառակութեան և թշնամութեան պատճառաւ, որոց մէջ կան Ամբրիկէի բնիկ ամենէն ծայրայեղ տարրերէն ոմանք։ Պ. Դրազա Պ. Բրանբէլի եղերական վախճանը չուսնենալու համար, հզօր կարաւան մը առած է իրեն հետ, եւրոպայի և բնիկ բազմաթիւ զինեալ մարդերով, և երկու տարուան պաշար։

ՀԱՊԼՆԱՍՏԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԵԱՆ ՏԷՐՈՒԹԻՒՆԵՐ

Հապէշաց Մենելիք թագաւորին դեսպանն որ Փարիզ ժամանեց այս օրերս՝ յայտարարեց թէ իւր վեհապետ մտադիր է կանոնաւոր դեսպաններ կարգել Ֆրանսայի և Ռուսիոյ կառավարութեանց քով։ Իտալիոյ խօսքը չկայ, մինչ Իտալացիք կը պնդեն թէ դաշնագրով Մենելիք ինքզինք Իտալիոյ թեւարկութեան ներքեւ դրած է։ Բայց Մենելիք այնպիսի դաշնագիր չի ճանչնար։ Այս խնդիր ո՛չ նուազ միտքերը կ'զբաղեցնէ Իտալիոյ մէջ, ուր կ'ըսուի թէ Եթիոպիոյ կողմն Իտալիոյ զոհողութիւնք գնահատելի արդիւնք մը չեն տուած ցարդ։

ՅԱԼԶԱՍ-ԼՈՒԻՆ

Սթրազպուրկի պաշտօնաթերթը կը ծանուցանէ թէ արհեստագործութեան վրայ գերմանական նոր օրէնքին համեմատ, ապրիլ 1էն անդին թոյակներն Ալզաս Լոռէնի մէջ եւս մարքով պիտի հաշուուին և ոչ ֆրանքով, և ֆրանք գործածող վաճառականք և հաշուակալք մինչեւ 2,000 մարք տուգանքի պիտի դատապարտին կամ վեցամսեայ բանտարկութեան։

ԳԵՐԵԿԱՅԱՁԱՌՈՒԹԻՒՆ Ց'ԱՔԻՐԻԿԷ

Զանզիպարէ առ Թայմ կը հեռագրուի թէ կեդրոնական Ադիրիկէի անգլ. պատուիրակ Պ. Ճոնսթըն և հարիւրապետ Մակուայր բռնած են գերիներու կարաւան մը Օփոնտայի երկրին մէջ։ Կարգ մը կռիւներէ և բնիկ ամրոցի մը պաշարումէ ետքը, այս անգլ. պաշտօնատարք ազատեցին 130 գերիներ, և հարկադրեցին զՕփոնտա խօսք տալու թէ իւր երկրէն պիտի փանէ գերեաց վաճառականները։ Բիչ ետքը նմանօրինակ դէպք մ'ալ պատահելով, Անգլիացիք 166 գերիներն եւս ազատեցին։ Յետոյ Պ. Ճոնսթըն դատեց եւ դատապարտեց գերեաց վաճառականներն, որք յուլիս ամսէն ի վեր կատարելապէս գիտեն թէ այս հակամարդկային տուրեւառ սրգիլուած է այն կողմեր։ Անգլիացիք վերջապէս քանդեցին Մաքանճիրա քաղաքն, որ կեդրոն եղած էր գերեվաճառներու։ Ամենուրեք պայմանագրեր կնքեցին գերեվաճառներու հետ, որք խոստացան այս արդիլեալ գործէն հրաժարիլ այսուհետեւ։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Գերմանք անսովոր պատիւ մը մատուցին իդեական սեռի փայլուն ներկայացուցչի մը, զՍր. Եոհաննա Մէոտրի կարդելով տնօրէն Բիլի Հնութեանց և Հնագիտութեան Թանգարանին։ Օրիորդն ինքն եւս նշանաւոր հնագէտ մ'է, և Գերմանիոյ մէջ նշանաւոր հնագէտ մը ճանչուելն ունայն խօսք մը չէ։

ԲԻՉ Մ'ԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծին Բրիտանիոյ առեւտրական շրջենաւք և առագաստանաւք ընդամենայն 10 միլիոն 896 հազար տակառաչափ պարունակութիւն ունին։ Առեւտրական նաւերու մասին Անգլիայէն ետքն եկող Տէրութիւնն է Գերմանիա, բայց յետամնաց կերպիւ կը հետեւի Անգլիոյ, քանի որ Գերմանական առեւտրական ամեն տեսակ նաւերուն տարողութիւնն է մէկ միլիոն 410 հազար տակառաչափ միայն։ Երրորդ Տէրութիւնն են Միացեալ Նահանգներն, որոց առեւտրական նաւերուն պարունակութիւնն է մէկ միլիոն 22 հազար տակառաչափ։ Ֆրանսա չորրորդ կուգայ, 984,946 տակառաչափ տարողութեամբ։

—)(129)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼԻԻ

ԵՐԿՈՒ ԱՆՄԵՂՆԵՐ

ԺԻՒԼ ՄԱՌԻ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՈՍՐԻՆ ՄՕՏ

Նորէն կը սրտապնդի։ Նորէն բանալին վրայ կը կրթնի։

Դուռը բացուած է։ Կը մնայ միայն հրել զայն։

Իր ընելիք վերջին ճիգն է այս որպէս զի աւարտէ այն գործն զոր կը ներշնչէ իրեն իր դժբախտ մայրութիւնը։

Այլ չի խորհիր։ Ցենդն յառաջ կը մղէ զայն։

Դուռը կրնկի վրայ բաց է և խոնաւ օդի հոսանք մը, մառանին մթին խորքէն գալով, դէմքին կը զարնուի։

Թերէզ կը ծռի, երկու աստիճան վար կիջնէ, և նուազուն ձայնով կ'ըսէ։

—Պարո՛ն... պարո՛ն։

Պատասխան չառներ։ Բայց խորունկէն խորդիւն մը կը ծանուցանէ թէ Պարուլլ քնացած է։

Ոտքը շիլերուն կը զարնէ։ Ա՛լ բանի մը ուշադրութիւն չըներ։ Խենդեցած է։

Կը հանդիպի թափառաշրջիկին մարմնոյն՝ կքած, կռնակը տակառի մը տուած, որ կը կաթէ, վանդի ծորակը չէ գոցած։ Ոտքովը կը հրէ զայն զգուանօք։

Պարուլլ կը մռլտայ՝ կիսովին արթնալով։

—Ի՞նչ կայ։ աղէկ եմ։ Ինչո՞ւ անհանգիստ կ'ընեն զիս։

—Ոտքի՛ ելէք։

—Անկարելի է։ Այնքան խմեցի որ սրունքներս թուլցան։

—Շո՛ւտ ոտքի ելէք և մեկնեցէք։

—Մեկնի՛մ։

Ցանկարծ գլխնթափ կ'ըլլայ։ Ոտքի կ'ելնէ, աչերը կը շփէ։

—Մեկնի՛մ, կ'ըսէ նորէն, ազա՞տ եմ, ազա՞տ կը թողուն զիս։

—Այո։

Ի սկզբան Պարուլլ չի հասկնար։ Այնքան արտասովոր բան է այս որ կը վախնայ երազելու։ Բայց երկու քայլ կառնէ մառանին մէջ, յետոյ մութին վարժուած իր աչուքները կը նշմարեն կռնակի վրայ բացուած դուռը,

—Ազա՞տ, ազա՞տ, կը մրմնջէ, ցնորագին։

Եւ աւելի մօտանց նայելով Թերէզին, խարխաբելով զայն։

—Կի՛ն մը... ձեր ձայնը կը ճանչնամ... ո՞վ էք դուք։ Ագարակապանուհի՛ն։

—Այո։

—Եւ դո՞ւք ազատութիւն կուտաք ինձ։

—Այո։

—Ինչո՞ւ։

—Ձեզ ըսածէս օգուտ քաղեցէք և մի՛ հարցուփորձէք զիս։

Պարույլ, հակառակ իր լսրչութեան և յանդգնութեան, ստուգիւ զարմացած երեւցաւ։ Մառի-Թերէզ փութաց աւելցունել, չմտածելով որ պայմանը շատ ուշ էր, քանի որ դուռը բաց էր։

—Կը խոստանա՞ք որ պարկեշտ մարդ մը ըլլաք... կուզեմ որ Ֆրանսայէն հեռանաք, և հեռու երկրի մը մէջ աշխատիք, որպէսզի ըստ կարելւոյն դարմանէք ձեր անցեալն ոճիրները։

—Ամեն ուզածնիդ կը խոստանամ։

Եւ շնչելով օդն որ բաց դռնէն ներս կը մտնէր, վայրենի գազանի մը պէս որ երկար ատեն փակուած մնալէ ետք յանկարծ անտառ կ'արձակուի։

—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ։

Դուրս կը խոյանայ։

Ամենն այս չէ։ Թերէզ տակաւին շատ բաներ ուներ ըսելու։

Կուզէր պարտականութեան յորդորել զայն, արցունք մը և վիշտ մը խլել այդ երկաթեայ սրտէն, բայց ալ ժամանակն անցած է։

Սակայն՝ մեկնած պահուն վերջին խօսք մըն ալ կ'ընէ։

—Այսուհանդերձ աղնիւ կին մըն էք... շնորհակալ եմ։

Ագարակապանուհին անոր կը հետեւի տարտամօրէն, թանձր մթութեան մէջէն, բայց աւազակին սեղուէթն արդէն խառնուած է խաւարին։ Բայլերուն ձայնն իսկ ալ չի լսուիր։

Ամբ կը վազէր։ Ապաշաւի՞։ Բաւութեա՞ն, թէ նորանոր ոճիրներու։

Այսպէս կը մտածէ, հէ՞ք կինը։

Եւ մառանը պիտի դառնայ՝ դուռը գոցելու, առ ի խոհեմութիւն կարգ մը զգուշութիւններ ձեռք առնելու համար, որպէսզի ջերմ մնայ ամէն կասկածէ և կարծել տայ որ Պարույլ մեզմակից չէ ունեցած փախչելու համար, ետ կը դառնայ երբ մարդու ստուերը մը կը տնկուի իր առջեւը։

Ցետոյ կ'ընկրկի՝ զարհուրած, չի ճանչնալով մութին մէջ։

Կը կարծէ թէ նոր սպանութիւն մը պիտի ըլլայ։ Կը պատրաստուի օգնութիւն աղաղակել։

—Ո՞վ էք։

—Լռեցէ՛ք, կ'ըսէ մարդն յոյժ ցած ձայնով։

Այս ձա՛յնը։ Բիչ մը առաջ կը լսէր զայն։ Միլպէրկի ձա՛յնը։

—Հէրի՛ն կը կարծէի թէ մեկնած էք։ Կը կարծէի թէ հեռի էք։

Մարմնովին կը սարսռայ Թերէզ։ Միւսը սաստիկ յուզուած է։

—Ի՞նչ ըրիք, թշուառական։

—Ի՞նչ կայ որ, կ'ըսէ ուրանալ ուզելով։

—Մի՛ ստէք։ Ամեն բան տեսայ։ Ետ դարձած էի։ Հո՛ն էի։

Ի սկզբան Թերէզ սարսափ կը զգայ, երբ կը մտածէ թէ պիտի պատժուի Պարույլն ազատելուն։

Ցետոյ կը հանդարտի։ Արագ մտածումմ մը կունենայ։

Բանի որ Միլպէրկ փախուստը կը տեսնէր, ինչո՞ւ չարգիլեց։ Պիտի կրնար արգելել։ Երեւան եկնելը կը բաւէր։

Եւ կ'ըսէր անոր։

—Ըրա՞ծս որ հարցունէք, շատ լաւ, եսալ, ըստ կարգի, կը հարցունեմ ձեզ թէ թէ ինչ ընելու եկած էիք... փոխանակ Լուվիէռ ըլլալու, Ինչու Բիէռ-Մարպռը կը գտնուիք։ Մեկնած էիք։ Ինչո՞ւ ետ դարձաք։

Դատաւորը գլուխը ծռեց։ Թերէզ տեսաւ յանկարծ որ Միլպէրկ կը դեղեւի, ծանրապէս կ'իյնայ հողին վրայ։ Եւ Հէրին լռութիւն պահեց։ Մինակ կուլար անձայն եւ գլուխը կը ցնցուէր հեծկլտուքներէն զորս ի զուր կը ջանար զսպել։

Այն ատեն, Թերէզ հասկցաւ և ճշմարտապէս գթութիւն զգաց այդ մարդուն նկատմամբ։

Անոր ականջին ծռեցաւ եւ մրմնջեց.

—Դո՞ւք ալ, այնպէս չէ՞։ Այս բանին վրայ մտածեցիք, ինծի պէս։ Եւ աւասիկ հոս ըլլալուդ պատճառը։ Թերեւս պիտի փորձէիք ազատ թողուլ զայն։ Պիտի թերանայիք ձեր դատաւորի պարտքէն՝ խղճի իսկ մը եւս խնայելու համար հօրը։ Բայց կը վարանէի՞ք։ Ա՛հ, որքան տառապած ըլլալու էք, քանի քանի անգամներ ճամբան կանգ առած ըլլալու էք, և ճամբան որշափ երկար երեւցած ըլլալու է։ Բայց չպիտի կարենայիք, ուժ պիտի պակսէր ձեզ։ Եւ աւելի աղէկ է որ ես ըրի զայդ։ Ա՛հ, այս աւելի աղէկ է, այնպէս չէ՞։

Հէրի լռութիւնը շարունակեց։

—Մտիկ ըրէք, ըսաւ Թերէզ, այս ամենը զղջալու համար է։ Պէտք է ցուցնել թէ գործուած չարիքին վրայ կը ցաւինք։ Բան մը եկաւ միտքս, կուզէ՞ք որ ձեզ ըսեմ զայն։

—Ըսէք, մրմռաց դատաւորը տկար ձայնով։

—Շարլօ ընտանեզուրկ է, Հէրի՛ն, ընտանեզուրկ իր բոլոր կեանքին մէջ... այն մարդը որուն ազատութիւն տուի, այն մարդը որ ոճիրներուն մէջ իր հետ քաշքըշած է Շարլօն...

Հէրի՛ն շարժում մը ըրաւ, իբր թէ զայն խօսելէ արգիլելու համար։

—Միտքս հասկցա՞ք, հարցուց Թերէզ։

—Այո, նոյն իսկ ձեզմէ առաջ խորհած էի այդ բանին վրայ։

—Շարլօն պիտի որդեգրէ՞ք։

—Պիտի որդեգրեմ։

—Այն խեղճ տղան ձեր զաւա՞կը պիտի ընէք։

—Այո, ապահով եմ, պարկեշտ մարդ մը պիտի ընեմ։

—Շատ լաւ, Հէրի՛ն, շատ լաւ... ըսաւ Թերէզ։

Դժուարաւ ոտքի ելաւ Միլպէրկ։

—Կուզէ՞ք ագարակ դառնայ։

—Ոչ։ Ասկից երկու քիլոմէթր անդին կապած եմ ձիս։

Երկու քիլոմէ՞թր։ Այդ ա՞նցքն ըրած էր Պարույլի մօտենալու համար։ Ի՞նչ սգալի ուղեւորութիւն։

—Մնաք բարով, ըսաւ։

—Երթաք բարով, Միլպէրկ։

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երէկ Դատական գործոց պաշտօնատունը գնաց և տեսակցեցաւ նախարար Վսեմ. Բիզա փաշայի հետ։

Երէկ Երուսաղեմայ Ս. Յակոբեան միաբանութեան տօնն ըլլալով, բազմաթիւ եկեղեցականք և աշխարհականք Երուսաղեմատուն գնացին և շնորհաւորական այցելութիւն տուին Երուսաղեմայ Պատրիարքական Փոխանորդ Գեր. Սիմէոն արքեպիսկոպոս Սէֆֆէրեանի։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն եւս երէկ իրիկուն Երուսաղեմատուն գնաց, ուր գիշերը սեղան մը տրուեցաւ ի պատիւ Ն. Ամենապատուութեան։

Այսօր Ս. Ստեփաննոսի տօնախմբութիւնն և Մայր եկեղեցւոյ դպրաց դասուն յատուկ տօնն ըլլալով, առաւօտուն եկեղեցական հանդիսաւոր արարողութիւնք կատարուեցան։ Արժ. Յովհաննէս Ծ. վարդապետ Արշարունի պատարագ մատոյց դպրաց դասուն հանդուցեալոց հոգւոյն համար։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Նախագահեց սոյն արարողութեանց, յաւարտ որոց դպրաց յատուկ ուսումնարանն հրթալով, շնորհաւորեց դպրաց դասն և իւր հարական օրհնութիւնները տուաւ։

Վսեմ. Նուրեան էֆէնտի երէկ հետեւեալ նամակն ուղղած և առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն.

Բարձրաշնորհ Ս. Պատրիարք Հայր,

Հաստատապէս համոզուած լինելով որ այլ ևս ժամանակն եկած է միանգամ ընդ միշտ ճշդելու Բերայի թաղային մատակարարութեան հիմնական պայմաններն, առանց սակայն շեղելու տիրող օրինաց ոգիէն, համարձակութիւն առած էի քանիցս դիմելու, այս վերջին ժամանակներս, առ Ձեր Բարձր Սրբազնութիւն՝ այս մասին վերջնական որոշում մը խնդրելու համար։ Այս եղած էր նաև Խորհրդոյս վերջին հաւաքական հրամարականին շարժառիթն և ի նոյն եզրակացութիւն յանգած էին միշտ բացատրութիւններն զոր ի վերջոյ պատիւ ունեցայ քանիցս բերանացի տալու առ Պատկ. Բաղ. Ժողովն։

Արդ ծանօթ է որ Ազգային Կեդրոնական Վարչութիւնն ի նկատի առնելով սակայն թաղիս ներկային և ապագային համար սոյն կարեւոր խնդրոյն բազմակողմանի հանգամանքներն և նոյն իսկ իւր Վսեմաչուք Ատենապետին միջոցաւ և ընդ նախագահութեամբ Գեր. Բարոնիչ Սրբազանի տեղւոյս բնակիչ կարևորագոյն ազգայիններով հանդիսաւոր խորհրդակցութիւն մ'ևս կատարելէ յետոյ, յարմար դատեց վերահաստատել մինչ այսօր ի կիր առնուած պաշտօնական դրութիւնն և այն ատեն մեզի շմնաց ուրիշ բան բայց եթէ համակերպիլ մի կողմանէ թաղիս կամքին և միւս կողմանէ Ազգ. Կեդր. Վարչութեան օրինօք պատկանած հեղինակութենէն ըղխեալ մի որոշմանը։

Ահա այսպէս ի գործադրութիւն Ձեր Բարձր Սրբազնութեան 28 Նոյեմբեր թուական հրամանին, պատիւ ունեցայ Խորհրդոյս վաղեմի անդամոց հետ համախոհ ներկայելու այն վարչական ծրագիրն, զոր իմ մասիս կը գտնէի և կը գտնիմ միշտ անհրաժեշտ մեր ստանձնելիք պաշտօնավարութիւնն արդիւնաւոր ընելու համար։

Եւ որովհետեւ մօտ օրէն պիտի սկսի նոր տարուան շրջանն և անկարելի է առանց սոյն ծրագրոյ հաստատման ապահովել թաղային մատակարարութիւնն, նա մանաւանդ իւր կրթական կարեւոր հաստատութեանց պէտքերն, կը խնդրեմ Բարձրաշնորհ Սրբազան Հայր իմ, որ բարեհաճիք եթէ կարելի է, Ամանորէ առաջ այս մասին շնորհել Ձեր հրամաններն։ վասն զի մեծ կրնան լինիլ վնասքն սոյն անորոշ վիճակին, որուն առ այժմ դատապարտուած կը գտնուի ամենայն ինչ։ և արդար չպիտի լինի վերագրել անոր պատասխանատուութիւնն խղճի մտաւք հրաժարեալ խորհրդականաց։

Մնամ խորին յարգանօք
Ձեր Բարձր Սրբազնութեան
ամենախոնարհ ծառայ
և հրաժարեալ Ատենապետ Թաղ.
Խորհրդոյ Բերայ
ՆՈՒՐԻԵԱՆ

23 դեկտ. 1891

Պատրիարքական Փոխանորդ Գեր. Գաբրիել Ծ. վրդպ. Ճէվահիրճեան, հիւանդութեան պատճառաւ երէկ չկրցաւ Պատրիարքարան երթալ։

Ամեն Ս. Պատրիարք Հօր հրամանաւ՝ Արժ. Արիստակէս քհնյ. Ճիզմէճեան փոխանորդարանի ընթացիկ գործերը պիտի վարէ ի բացակայութեան Գեր. Փոխանորդին։

Պանտրմայի և Պալըքէսիրի առաջնորդ Գեր. Տիմոթէոս եպիսկոպոս, որ մայրաքաղաքս կը գտնուի, ներկայ տօնական աւուրց և Ս. Ծննդեան տօնին եէնիգաբուի եկեղեցին պիտի մատչի։

Սապան կիմանայ թէ մէկ քանի բարեսէր անձինք վարձած են ի Սարբեար Օրթա Զէյվէի սրճարանն, որ փաստարան Մոստիճեան Յովհաննէս էֆէնտիի սեպականութիւնն է, և թէ այդ սրճարանի հասոյթը պիտի յատկանայ ի նպաստ Ս. Փրկչի Հիւանդանոցին։

Ստացանք Ս. Էջմիածնայ Աբբայ պաշտօնաթերթի նոյեմբերի թիւն, ուստից արտատպած ենք այս աւուր երրորդ էջին մէջ, Սինօդի Օրագրութեանց Քաղուածքն իր ամբողջութեամբ։

Թօքաթլեան և Հարենց ընտանիքներն իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն ամեն անոնց որք հաճեցան ներկայ դառնուիլ վաղամեռիկ Տիկին Մարգարիտի Գ. Հարենցի յուղարկաւորութեան, և այս տխուր հանդիսին առթիւ ցաւակցութիւն յայտնեցին։

ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ

Պահնէ Գաբու Բօսթանճանէի դիմացի անկիւնը Թիւ 4

Հայերէն և Թուրքերէն դասագրքեր.— Երուսաղէմ, Վիէննա, Վենետիկ և Տփղիս տպուած պատմական, գրական և կրօնական գրքեր.— Մեծ սրճ ամէն տեսակ գաղղիերէն դասագրոց և աշխարհացոյցի, յոյժ զեղչեալ գներով — Ցանձնարարութիւն կ'ընդունուի ամէն լեզուէ և ամէն երկրի գրոց և հանդէսներու համար, գիւրամատչելի պայմաններով և կը զրկուի ուզղակի Եւրոպայէն ուզուած հասցէին։— Կեդրոնատեղի Լուսինեան Հիշխանի բոլոր երկաթուղիներուն։— Գրատան ստացած թերթերն՝ Լանսթիւռ, Ռիպիւ անսիքլոբէտիֆ.— Ֆիկարօ միւզիք, և Ֆիկարօ սաղօն, Լը մոնտ իլլիւստրէ, Բրդի Բաբիզիէն, Լէֆոլիտ իլլիւստրէ, [գպրոցականաց համար] զրոս կո վամառէ հատով և կ'ոնդունի նա բաժանորդ.— Ամէն գրոց համար զոնացուցիչ զեղչ երբ գնմանք մեծաքանակ են.— Տպագիր և վիմագիր քառդ միգիդ ամէն լեզուով. լաբ քառքոն և չափաւոր գին։— Դպրեցիկար և գեղեցիկ քառդեր, Նուէրի և շնորհաւորութեանց համար.— գպրոցական ամէն տեսակ պետք.— Գծագրական պետք, Ներկ, Ներկի տուփեր, կարկինի տուփեր.— Մելան գրիչ.— Հաշուոյ եւ Գոբիի տետրակք, Թղթեղէնք եւ պետք. վաճառատան ու գրասենեկի.—Բարիզեան զրուարեալի ալմանակներ։— Պատի օրացոյցներ այլ եւ այլ.— Գրպանի օրացոյցներ, ոսկեզօծ, մեսֆութեայ և բաւեայ, ապակ, Երուսաղէմ, Պոլիս եւ Վենետիկ։— Նուէրի գրքանք և օգտակար նիւթեր. փարիզեան ապրանք։ — Ընտիր ժօպ. — Վճարմունք կանխիկ։— Հասցէ՝ Զ. Թորոսեան. Բիւզանդեան Դպրատուն. Պահնէ Գաբու Թիւ, 4։

Դպրատունս յաւելիկայ կիւբակէ բաց է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՆՏՈՆԱԲԱՆԻՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՆԱՆՔ

Պէշիքթաշի Նախպ անուանեցաւ Հասան Բէճէպ էֆէնտի, անդամ Թէսդիդաթը Շերիֆի ժողովին։

— —

Զորրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Միլիքիէ վարժարանին ֆրանսերէնի և Սուլթանիէ վարժարանին Լատիներէնի ուսուցիչ Պ. Ժէռմէն Լէսքանի։

— —

Ի Բ. ԴՈՒՌՆ

Մաքսային վերատեսուչ Հասան Ֆէհմի փաշա երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

—Վանայ Նորընտիր կուսակալ Պահրի փաշա երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին և Ներքին ու Արտաքին գործոց Վսեմ. Նախարարներուն հետ։

—Հելլենական ու սպանիական դեսպանք երէկ Բ. Դուռն երթալով յաջորդաբար տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին և Վսեմ. խորհրդականին հետ։

— —

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(Թէքիրտաղ Վէյսէլէն քաղուած)

Վեհ. Սուլթանն հրաժարած ըլլալով՝ անպաշտօն մնացած և հանդստեան կոչուած քաղաքային պաշտօնէից ապրուստն աւելի եւս ապահովել, այդ մասին յատուկ կանոնագիր մը պատրաստուած և վաւերացած է կայս. ի. բարձրէ։

—Ներկայ դեկտեմբեր ամսոյ 15էն մինչեւ 23, մաքսային պաշտօնեայք մաքսէ փախցուած 28 ձեռք ապրանքներ դրաւած են։ Ասոնցմէ 17էն կրկին մաքսատուրք առնուելով, իրենց տէրերուն վերադարձուած, վեցը դրաւուած և հինգն ալ ծխախոտ ըլլալով Բէյճիի վարչութեան յանձնուած են։

—Սէլանիկի կուսակալութիւնն հեռագրած է Ներքին գործոց Նախարարութեան թէ Թէքուշի մէջ ութ աւազակներ ձերբակալուեր են և թէ ասոնց ընկերներէ ուրիշ աւազակ մը, որ փախած էր, սպանեալ ձերբակալուեր է։

Եանեաի կուսակալութիւնն եւս հեռագրած է Ներքին գործոց Նախարարութեան թէ Դէրթի գաւառակին մէջ Ապպաս Գալէմ անուն աւազակ մը սպաննուեր և իւր երեք ընկերներն եւս ողջ ձերբակալուեր են։

— —

ՎՍԵՄ. ՍԱՅԻՏ ՓԱՇԱ

Արտաքին գործոց Նախարար Սայիտ փաշա ապաքինած ըլլալով երէկ իւր պաշտօնի գլուխն անցաւ։ Ն. Վսեմութիւն նախ և առաջ կայս. պալատ երթալով, հիւանդութեանը պահուն իրեն նկատմամբ ցոյց տրուած կայսերական հոգածութեան համար շնորհակալութիւն մատոյց։

Վսեմ. Սայիտ փաշա երէկ պահ մը տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

— —

Պ. ՐԷՍՄԱՆ

Իտալական նոր դեսպան Պ. Ռէսման նախընթաց օր Արտաքին գործոց նախարար Սայիտ փաշայի ապարանքը գնաց ի նշան Թաշ և իւր յանձնարարագրոյ մէկ օրինակն յանձնեց Ն. Վսեմութեան։

. .

Պ. Ռէսման ծնած է ի Թրիէսթէ 1832ին, հետեւաբար 59 տարեկան է այժմ։ 1861ին աւստրիական հպատակութիւնը թողլով իտալական հպատակ եղաւ։ Դեսպանական ասպարէզն սկսած է ի Փարիզ, ուր 1863ին դեսպանական կցորդի պաշտօն վարեց։ Իր արժանեաց շնորհիւ՝ քիչ ժամանակուան մէջ յառաջ գնաց։ Երկու տարի Լոնտոնի իտալական դեսպանատան խորհրդական ըլլալէ ետք, առաջին անգամ իրեն յանձնուեցաւ 1882ին, գործակատարի պաշտօնով, վարել Փարիզի իտալական դեսպանատան գործերը։ 1884ին լիազօր դեսպանի տիտղոսով, դեսպանական խորհրդական անուանուեցաւ։ Իտալական Թագի, Ս. Մորիսի և Ս. Լազարի, Պատուոյ Լեգէոնի, պարսկական Արծուի և Արեգական ու այլ պատուանշաններ ունի։

— —

ԲԱՐՁՐ. ՐԻԶԱ ՓԱՇԱ

Սպաթապետ Բարձր. Ռզի Ռիզա փաշա, որ մէկ քանի օրէ ի վեր հիւանդ էր, բոլորովին ապաքինած ըլլալով, երէկ կայս. պալատ գնաց և հիւանդութեանը պահուն իրեն նկատմամբ ցոյց տրուած կայսերական հոգածութեան համար շնորհակալութիւն մատուցանելէ յետոյ, իւր պաշտօնատեղին գնաց։

— —

ՎԱՆԱՕ ԿՈՒՍԱԿԱԼԸ

Զեռնէհաս իշխանութիւնը հրամայած է Վանայ Նոր կուսակալ Ֆէրիդ Պաշրի փաշային՝ որ իւր պաշտօնատեղին ուղեւորի։ Միւս կողմէ Նախորդ կուսակալ Խալիլ պէյի ծանուցուած է իւր հրաժարեցուցուիլը։

— —

ՆԻԿՈՄԻԴԻԱ-ԷՆԿԻՒՐԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Նիկոմիդիա-Էնկիւրիի գծին ուղիներու հարթութիւնք և այլ արհեստական գործողութիւնք աւարտած են։

Երկաթեայ գծերը զետեղուած են մինչեւ Էսկի-Շէհէր և կը յուսացուի որ յառաջիկայ օգոստոս ամսուն, եթէ արտասովոր բան մը չպատահի, Հայտար-Փաշայէն մինչեւ Էնկիւրի կարելի ըլլայ երթալ երկաթուղիով։

. .

Նիկոմիդիա-Էնկիւրի գծին անցած տեղերու տասանորդի տուրքը, կըսէ Սպպահ, որ անցեալ 1306 տարւոյն մէջ 120,000 ոսկւոյ վարձակալութեան տրուած էր, այս տարի շինուելու վրայ եղող երկաթուղւոյն պատճառաւ 180,000 ոսկւոյ վարձակալութեան տրուած է, որով եւմտական Գանձն այս տարի 60,000 ոսկւոյ հասոյթի առաւելութիւն մը ունեցած է։ Կայս. կառավարութիւնն եւս երկաթուղւոյ գծին իւրաքանչիւր քիլոմեթրին համար տրուելիք 15,000 ֆրանք ապահովութեան գումարին ի հաշիւ մինչև Պիլէճիկի համար 42,000 ոսկի տուած է, որով 18,000 ոսկւոյ շահ մը ունեցած է։

— —

ԿՐԷՏԷ

Վերաքննիչ ատենի ընդհանուր դատախազ Խալիլ պէյ Նախարարաց Խորհրդոյ կիրակի օրուան նստին հրաւիրուելով բացատրութիւններ տուաւ այն հինգ ծրագրերուն վրայ, զորս մատուցած էր ի մասին բարենորոգման Կրէտէի դատարանաց։ Նախարարաց Խորհուրդն այդ ծրագրոց վրայ խորհրդակցութիւններ կատարեց։

—Խալիտ պէյ երէկ դարձեալ Բ. Դուռը գնաց և այդ խնդրոյն վրայ տեսակցութիւն մ'ունեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

— —

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Սուրիայէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ վերջին 24 ժամուն, Դամասկոսի մէջ հնոտախի նոր դէպք մը չէ պատահած եւ թէ առաջուան բռնուածներէն մէկ մահ պատահած է։

— —

ՄԱՀՈՒ ՊԱՏԻԺ

Հռչակաւոր աւազակ Թանաշ փալաչօ, որ առաջին անգամ ներման արժանացած էր, նորէն աւազակութեան սկսած ըլլալով, ժամանակէ մը ի վեր ձերբակալուած էր։ Եանեաի պաշտօնաթերթը կը ծանուցանէ թէ անցեալ ամսոյն Թանաշ կախուեր է հասարակաց ճամբուն վրայ։

— —

ՇՈՂԵՆԱՒԱՅԻՆ ՆՈՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Կէլիպոլուի թաղապետական նախագահ Մուսթաֆա Ասիմ էֆէնտի և նոյն քաղաքին երեւելիներէն Պ. Սթեփանոս կայս. կառավարութենէն արտօնութիւն խնդրած են՝ շոգենաւային ընկերութիւն մը հիմնելու Շիրքէթը-Սուլթանիյէ անուամբ, որ շոգենաւեր պիտի բանեցուցէ Մարմարայի ասիական եւ եւրոպական եզերքները և Տարտանելի ու Մարմարա կղզւոյն մէջեւ։ Խնդրարկուք կը խոստանան իրենց շոգենաւերը փոթորկի ժամանակ նաւերու փրկութեան գործածել։ Բաժնետերաց ամենն ալ օսմ. հպատակ պիտի ըլլան։

— —

ՕԳԵՐԵՒՈՒԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Բերայի կայս. Դիտարանը հետեւեալն հաղորդած է։

22 դեկտ. 1891—կէս օր ժամ 7. 10

Եւրոպայի արեւմտեան կողմն ինչպէս նաեւ կեդրոնական մասին մէջ ծանրաշաչիրը բաւական բարձրացած է։ Իսկ Շուէյտի եւ Ռուսիոյ հիւսիսային կողմը բաւական վար իջած է։ Միջերկրականի մէջ հիւսիսային թեթեւ հով կը փչէ, իսկ Ափրիկեան ծովեզերայվրայ՝ բաւական սաստկութեամբ։ Վենետիկի ծոցին մէջ հիւսիսային արեւելեան թեթեւ հով մը կը փչէ։ Իսկ Արշիպելագոսի մէջ—տեղ տեղ անձրեւաքաղ—հարաւային թեթեւ հով։ Սեւ ծովու մէջ հիւսիսային թեթեւ հով կը փչէ։ Գլխաւոր քաղաքաց մէջ բարեխառնութիւն է։

Կ. Պոլիս 7°, Տրապիզոն 9°, Զմիւռնիա 12°, Սելանիկ 8°, (անձրեւ), Պաղատատ 10°, Քիոս 16°, Փարիզ 3°, Աթէնք 12° և Թրիեսթէ 4°։ Իսկ զէրոյէն վարէ հետեւեալ քաղաքաց մէջ։ Մոսքուա 6°, Սուլինա 1°, Բեգրսպուրկ 14°, Մոսկուա 3°, Արքանկել 24° և Օտեսա 4°։

— —

ԱՆԶՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

Բանկալթի բնակող պատուաւոր հայ ընտանիքի մը պատկանող 28 ամեայ Գ... անուն երիտասարդ մը նախընթաց օր անձնասպանութիւն փորձեր է, բայց ըէվոլվերի գնտակը չեղած ըլլալով՝ պատին մէջ գացեր մնուեր է։

Սրտի տագնապներու կը վերագրուի այս յուսահատ փորձ։

— —

ՀԱՃԻ ԱԼԻ ՊԷՅԻ ԿԻՆԸ

Վեհ. Սուլթանի առաջին սենեկապետ Վսեմ. Հաճի Ալի պէյի կինն, որ ժամանակ մ'ի վեր հիւանդ էր, նախընթաց գիշեր մեռաւ և յուղարկաւորութիւնը երէկ հանդիսաւոր կերպիւ կատարուելով մարմինն ամփոփուեցաւ Սկիւտարի դերեզմանատան մէջ։

— —

ՄՈՒՏԱՆԻԱ-ՊՐՈՒՍԱՅԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Կայս. Իրատէ մը վաւերացուցած է Պետական Խորհրդոյ որոշումն ի մասին մէկ քանի թեթեւ փոփոխութեանց, որք ներմուած են սոյն երկաթուղւոյն յանձնառութեանց տետրին մէջ։ Այս իրատէ հաղորդուած ըլլալով Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան, սոյն փոփոխութիւնք կատարուած են յանձնառութեան տետրին մէջ։

— —

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ

Կ'իմանանք թէ Սինանեան Նուագախումբը կը պատրաստուի Գատրգիւղի ձեռնարկի թատրոնին մէջ Նուագահանդէս մը տալ, աջակցութեամբ խումբ մը ուրիշ արուեստագէտաց։ Սինանեան Նուագախումբն իւր այս ձեռնարկի յաջողութեան համար կը յուսայ գտնել Գատրգիւղի հասարակութիւնէն, և մասնաւորապէս հայերէն, քաջալերութիւն և համակիր ընդունելութիւն մը։

Հեռագրական եւ Թղթատարական նախորդ վերատեսուչ վախճանեալ Իզզէթ էֆէնտի ժառանգորդ չունենալուն համար թէեւ ստացուածքը Պէյթիւլմալի ու Գասամի կողմէ վաճառուած էր, սակայն այժմ երեք անձեր ներկայանալով իբրեւ ժառանգորդ Իզզէթ էֆէնտիի իրենց բաժինը պահանջած են։ Շէյխ Իւլ-Իսլամի Դուռն այդ խնդիրը քննելու վրայ է։

—Մաքսային Ժողովոյ անդամներէն Մէհմէտ Ալի էֆէնտի, որ հիւանդ էր, երէկ մեռաւ։

—Իպրահիմ փաշայի աղջկան և Ֆոթոու Ֆարօ ընկերութեան միջեւ եղած դատի մը պատճառաւ առաջինը դատ բացած էր առեւտրական առաջին դատարանին նախագահին ու անդամոց դէմ։ Արդ, վերաքննիչ ատենը բողոքողին աղերսագիրն ընդունելի դատած ըլլալով, առեւտրական առաջին դատարանին նախագահը Վճռաբեկ ատենին դիմած է այդ որոշումը բեկանել տալու համար։

—Վոսփորի ձկնորսներն աղերսագրով մը Բարձր. Մեծ-Եպարքոսին դիմելով խնդրած են մաքրել տալ Վոսփորի մէջ գտնուած ձուկ որսալու յատուկ տեղերը։ Այս խնդիր յանձնուած է Պետական Խորհուրդին։

—Մաքսային վերատեսչութեան մէջ յանձնաժողով մը պիտի գումարի քննելու և ընդարձակելու համար մաքսային պահպան պաշտօնէութեան յատուկ կանոնները ու գործառնութիւնները։

—Հպրբդտարդատէ Մէհմէտ Ճէմիլ պէյ ու ընկերը Մինաս էֆ. Տէր Միքայէլեան մենաշնորհ ստացած են խուզարկութիւններ կատարել Գարասրի Էսրէֆիտ գաւառակին Իւնեա գիւղախումբին չրջակայքը գտնուած արծաթախառն կապարի, անթիմօնի ու պղտասիթի հանքերուն մէջ։

—Սանասի (Եէմէն) մէջ մէկ քանի օրէ ի վեր ցուրտ կ'ընէ եղեր և ջուրերը սառիլ սկսեր են։

—Ի Պէրութ հրատարակեալ Էլ Ահվալ լրագիրը, պաշտօնական պատուէրներու անսաստած ըլլալով, տասնհինգօրեայ դադարման դատապարտուեր է։

—Ոստիկանութեան Նախարարութեան հրամանաւ իւրաքանչիւր ոստիկան, իւր հետն ոստիկան-զինուոր մը առնլով, դիշեր ցերեկ պիտի պտրտի հանրային կարգապահութեան վրայ հսկելու համար։ Ցաւոտուկ պաշտօնեայք եւս պիտի հսկեն թէ ոստիկանք ինչպէս կը կատարեն իրենց այդ պաշտօնը։

—Բարբերդէն Սասունի ուղղեալ նամակ մը գովեստիւք կը խօսի տեղւոյն կուսակալ Բէյճի փաշայի բարձր պաշտօնավարութեանը վրայ և կը յարէ թէ այս պատճառաւ ժողովուրդը բարեմաղթութիւններ կ'ընէ վասն կենաց Վեհ. Սուլթանին։

ՕՍՄ. ՊԱՆԲԱ

Օսմ. կայս. Պանքայի Ղալաթիոյ, Բերայի և Պոլսոյ դրասենեակները գոց պիտի մնան վաղը չորեքշաբթի 25 դեկտ. 6 յունուար։

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԲԵՐԱՅԻ

Այս գիշեր, դեսպանական երեկոյթ։ Պիտի ներկայացուի՝ Լա ֆիլ դիւ Բէժիմն (LA FILLE DU REGIMENT) և Մոն Իզմէնէ (MON ISMENIE) կատակերգութիւնը, մասնակցութեամբ խումբին առաջին երգչուհի Օր. Աննա Կրէժիայի։

Մէրէյլի մէջ, յարուց Օր. Կրէժիա առաջին անգամ երեւցաւ Բերայի հասարակութեան, իր գեղեցիկ ու յստակ ձայնով, շնորհալի ձեւերով ու արուեստագիտական ձիրքերով գրաւեց արդէն համակրանք։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Խասգիւղցի հայ օրիորդ մը, որ իւր մէկ աչաց տեսութիւնը գրեթէ կորսնցնելու տխուր կացութեան մէջ կը գտնուէր, ազնուաբար դարմանուած և բժշկուած ըլլալով Տոքթ. Եսմէրեան էֆէնտիի ձեռամբ, կը խնդրէ մեզմէ հրապարակաւ իւր շնորհակալութիւնն յայտնել առ մեծարոյ ակնարոյժն՝ նոյնքան իւր բժշկական ճարտարութեան որքան և մարդասիրական ազնուութեանն համար։

ԱԼՄԱՆԱ ՄԻՆԵՈՆ

Այս անուամբ 112 էջերէ բաղկացեալ օրագոյց մը լոյս տեսած է Մինասեանի տըպարանէն ի Բերա, որ կը պարունակէ Պոլսոյ գլխաւոր վաճառատանց հասցէները, ինչպէս նաեւ գեղեցիկ նորավէպեր՝ արձակ և ոտանաւոր։ Կը վաճառուի ի Բերա, Բասած տ'Էօրոբ, Թիւ 11։

Գին 3 դահեկան

ՓԱՍՏԱԲԱՆ

ԹՈՐՈՍ ԷՖԷՆԴԻ ԵԱԶԸՃԵԱՆ

Որ տասներկու տարիէ ի վեր փաստաբան Մանեասիզատէ Էֆֆիդ պէյ հետ կը պաշտօնավարէր, այս անգամ անկից բաժնուելով՝ Ղալաթիա, Նարատունկեան խանի 11 թիւ դրասենեակը հաստատած է իւր կեդրոնը։ Պատրաստ է ստանձնել և գոհացուցիչ կերպով տեսնել թէ՝ բոլոր դատարանաց և Շէրիի վերաբերեալ և թէ Պատրիարքարանի մէջ տեսնուելիք ամեն տեսակ դատական գործեր, ինչպէս նաեւ դաւառներէն ղրկուելիք վերաքննական և վճռական դատեր։

4—8

ՀԵՌԱԳԻՐ ԼՈՒՐԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ԼԻԶԲՈՆ, 4 յուն.—Խորհրդարանի բացման գահաճառը կը հաստատէ թէ բոլոր պետութեանց հետ յարաբերութիւնք յոյժ լաւ են։ Ճառը կ'ըսէ թէ Փորթուկալ առեւտրական դաշնագրոց մասին բան մը չպիտի չնորհէ առանց համարժէք արտօնութիւններ ընդունելու։ Կարգադրութիւններ ձեռք պիտի առնուին դրամական կացութիւնը վերահաստատելու համար։

— —

ՏՐԵԶՏԱ, 4.—Գէորգ իշխանին վիճակը բարւոքեցաւ։ մահու վտանգ չկայ։

— —

ԿՄԲՆՏԷՆ, 4.—Հանովերի թագուհին անհանդարտ գիշեր մը անցուց յաճախակի հազի մը պատճառաւ, բայց ընդհանուր վիճակը գոհացուցիչ է։

— —

ՊՐՈՒՍԵԼ, 4.— Թագաւորը բոլորովին աղէկցաւ։

— —

ՓԵՇԹԱ, 4.— Հունգարիոյ պահեստի գործօն բանակի նախկին դեր-հրամատար զօրավար Կրաէֆի մեռաւ ինֆուլէնցայէ։

— —

ՖՈՒՌՆԻԷԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ՓԱՐԻԶ, 4.—Պատասխանելով Թուլոնի քաղաքապետութեան հրաւէրին, հելլենական Սբէյշ զրահաւորին սպայակոյտն ու հրամատարը ներկայ գտնուեցան ռուսական Մէնէն զրահաւորին ընդունելութեան հանդէսին, և ժողովրդեան կողմէ ջերմագին ցոյցերու արժանացան։

— —

ՌԻԷՎ, 4.— Հրաման եղաւ Վօլհիլիոյ իշխանութեանց որ Նպաստաւոր եղանակ ընդունին Կալիչիոյ գիւղացիները որք վերջերս հեռացան աւստրիական հողէն սոյն նահանգին մէջ հաստատուելու համար։

— —

ՓԵԹԵՐՍԲՈՒՐԳ, 4. — Պաշտօնական յայտարարութիւնք կը հաստատեն դժբախտաբար թէ սովը կը սպառնայ ի Ֆինլանտա։ Մեծ Դքսութեան սովատանջ բնակչաց թիւը 250,000ը կ'անցնի։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 24 Դեկտեմբեր

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնդրայի վրայ	109 1/4
3 » Բարիզի »	23 05
Օսմանեան Քոնսոլիտէ	
Երէկ երեկոյ գոց. [Միաց. Դ. Սերի]	20 02
Բերայի մէջ »	— —
Առաւօտուն բացուեցաւ »	20 07 1/2
կէս օրին »	20 07 1/2
Թահվիլաթը Օսմանիէ երէկ երեկոյ	76 34
» » ժամ 3ին	77 08
ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹԼԹՈՑ	
Փոխառութիւն Ա. Սերի	44 1/4
» Բ. »	25 1/4
» Գ. »	20 07 1/2
ԲԱԺՆԵՑՈՒՄՔ	
Օսիէթէ ժէնէրալ Ազգ. Լր.	4 10
Ֆրէտի ժէնէրալ » »	7 36
Պանք տը Գոնտ » »	4 20
Սօս. Շանժ. է վալէօր » »	4 20
Ռէժի » »	15 11
Թրամուէյ » »	630
Բուսէլիի երկաթուղի Ֆր.	64 7/8
Բաժնեթուղթ Լավրիօմ Գ. կ.	128
ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ	
Օսմանեան ոսկի Ղրշ.	100
20 ֆրանքոց »	87 02
Անգլիական ոսկի »	109 35
Մարք [Գերմանական ոսկի] »	107
Իմպերիալ »	90
Ֆրիմէրց »	51 10
Բուպլի Թղթադրամ »	9 27
Մէտ. արծաթ [տարբ.] »	107 35
Մանր արծաթ »	101 20
Մէճիտիէ »	97
Թասֆիյէ »	22
Տպոս Ղալաթիոյ Սակարանի »	7

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ԲԱՐԻԶ, 4 Յունվ., ժամ 3 վայր. 50 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	95 40
» » 4 1/2 %	105 65
Օսմանեան քոնսոլիտէ Սերի Դ.	18 70
» երկաթուղի	65 12
» Բէժիի բաժնեթուղթք	350
Պանք Օթոման	553 12
Սոսիէթէ ժէնէրալ	— —
Գրէտի Լիոնէ	805
Իտալական Ռանթ 5 %	92 75
Բրիօրիթէ Թիւրք (1890)	420
Եգիպտական միացեալ	483 12
Օսմ. մաքս. արտեթուղթ	451 87
Օսմանիէ (Օսմանեան քոնսոլիտէ)	350
Զէր Լոնդրայի վրայ	25 17 1/2
ԼՈՆԴՈՆ, 4.— ժամ 5 վայր. 50 երեկոյ	
Անգլ. քոնսոլիտէ	95 3/4
Օսմ. » Սերի Դ.	18 43
» » » Ա.	44 1/4
» » » Բ.	25 1/4
» » » Գ.	18 43
Փոխառութիւն 1877	— —
Պանք Օթոման	11 93
Եգիպտական միացեալ (իւնիֆիդէ)	95 5/8
» առանձ. (քրիվիլէժիէ) 1890	89 3/4
Ցօմանիալ (փոխառ. Ռուչիլտ)	102
Ռուսական 1890 Գ. կ.	94
Այտրոյի երկաթուղի	22 1/2
Թասաղայի երկաթուղի	15 1/2
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 420
ՎԻԵՆՆԱ, 4.— ժամ — վայր —	
Օսմանեան երկաթուղի	31 50
» Բէժիի բաժնեթուղթ	160
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	118 30
» Փարիզի »	46 82
ՊԵՐԼԻՆ, 3.— ժամ — վայր. —	
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 235
» Փարիզի »	81 50
Բուպլի Թղթադրամ	196 75
Օսմանեան երկաթուղի	60 50
Օսմ. քոնսոլիտէ Սերի Դ.	18 20
Օսմ. Բէժի	— —

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՐՍԱ

Բարիզ, 4.— ժ. 10 վ. — երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	95 37
Օսմանեան քոնսոլիտէ Դ.	18 67
Օսմանեան երկաթուղի	— —
Օսմ. Բէժի	352 50
Բրիօրիթէ

բախանի թեմի հոգեւորականների որբերի եւ այրիների դանձանակին։

8։ Հոկ։ Մայր Աթոռի վաստաբան Պ։ Ռուբէն Հասան-Ջալալեանցին տրուեց 250 ռուբլի ճանապարհածախս որ պարոնը ներկայ լինի Նախիջեւանի դաւառի կալուածական վէճերի քննութիւններին հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսներում։ Կարմիր վանքի կալուածների գործի քննութիւնը նշանակուած է հոկտեմբերի 14ին, Թաւրիզ քաղաքինը 2ին, Փորադաշտինը—նոյեմբերի 8ին, Ռամիսի տուրբ Սարգսինը—13ին եւ Բիստ գիւղինը 25ին։ Ընդամենը 5 գործ եւ իւրաքանչիւր գործի համար 50 ռուբլի ճանապարհածախս, Պ։ Հասան Ջալալեանցի հետ ունեցած պայմանի (20 մարտ, 1889 թ.) 4 րդ յօդուածի համաձայն։ Պ։ փաստաբանը իւրաքանչիւր գործի քննութեան հետեւանքի մասին առանձին առանձին յայտնելու է Սինոդին ի գիտութիւն։

9 Հոկ։ Ալէքսանդրապոլի վիճակային փոխանորդ բարեշնորհ Գարեգին վարդապետ Սաթունեանցին միամսեայ արձակուրդ է տրւում Թիֆլիս գնալու բժշկութեան համար։

